

ու միայն հայհոյանք եւ կոչում այն գրութիւնը, որի գլխաւոր նպատակը եղել է քո բոլոր ազգին դարձուցած հայհոյանքը դատաւարտել ու գրել. կամենումես փակել մեր բերանը դատաստանի անունով. քո հնարած ազատութիւնը քննադատեմ եմ հանդէսումը խլումես մեր ձեռքից. ո՞վ քերասքանը դուկտոր. միմէ կայ այս տեղ ուսումնականութեան նշոյլ. միմէ կայ այս տեղ ոչ միայն Ֆլամարիտ դուկտորի յատկութիւն, այլ եւ իսկապէս աշակերտի նմանութիւն. ինչ անհնար քեզ հետ:

Եազան սէն, պոզան սէն.

Բիմ դէր քի եալան սրն.

Իրաւ է դուկտորի անուն ու վկայական ունես, ինչ չէ պատահում աշխարհումը. բայց ինքը, Պ. Նազարեանց, դուկտորի նման չես, որպէս շողգամը փորձագալին. անունը կայ, իբր չկայ:

Rien n'est plus commun que le nom,

Rien n'est plus rare que la chose.

Ձէ, Պ. Նազարեանց, դուկտորի վկայականդ դիր առ ժամանակ Սաղայի կամուր, ինչպէս ասացինք. ու եկ, փոքր ինչ խօսենք քեզ հետ, լսենք ու քննենք քո զօրաբանի պատասխանները: Դու, ցանկանում ես մեր ցուցմանը ընդդէմ հաստատել, թէ քո կրօնի վարդապետարանի ու Հանդէս նոր հայախօսութեան ասած անսկզբիտարանութեան մէջ չկան լուստերական մտքեր: Այդ նշանակումէ, թէ դու քո գրածդ եւս չես հասկանում. գլուխդ չգիտէ, թէ լեզուդ ինչ է խօսում, գրիդ ինչ է գրում: Ե՛կ ուրեմն հասկացրենք քեզ, ո՞չ թէ քեզ ուղղելու համար, որովհետեւ վերանորոգում ես արդէն հաւատի մէջ, այլ մեր հարազատ Հայ եղբայրը զգուշացուցանելու նպատակով: Բացիր քո կրօնի վարդապետարանը. (ասում ենք քո կրօնի, որովհետեւ նախ վերանորոգում ես ոտքից մինչեւ գլուխ. երկրորդ՝ գրքիդ վերնագիրը այդպէս է ցուցանում, ասելով՝ «Վարդապետարան կրօնի Ստեփանոսի Նազարեանց». ուրեմն քո սեփական եւ առանձին վերանորոգում կրօնի եւ ոչ թէ Հայաստանեայց մի եւ ընդհանրական եկեղեցու. կարդա եր. 53. «քրիստոնէութեան հիմնադիրը կարգել է երկու խորհուրդ՝ մկրտութիւն եւ հաղորդութիւն»: Ինչ է նշանակում այդ. ո՞ր են մնացեալ հինգ խորհուրդը, որը որ քո ազգային եկեղեցին ընդունումէ մկրտութեան եւ հաղորդութեան հետ հաւասար. բացիր այժմ մեր եկեղեցու կրօնագիրքի Թիւմները, որը կամենաս. նոցա ամենի մէջ կտեսնես միատեսակ գրում, այսպէս. խորհուրդք եկեղեցւոյ են եօթն. մկրտութիւն, հաղորդութիւն, ապաշխարութիւն, պսակ, ձեռնադրութիւն ու վերջին օծումն, բացիր այժմ ու կարդա լուստերականների կրօնագիրքի Թիւմներ, զոր օրինակ իւր իսկ Լուստերի սեփական քրիստոնէականը, Der kleine Katechismus von D-r Martin Luther, Moskau, 1825, ու տես, ինչ է գրած 28 եւ 31 երեսներումը, չորրորդ եւ հինգերորդ

գլուխներումը. տես, թէ քանի խորհուրդ է ընդունում Լուստերը, Das Sakrament der heiligen Taufe und das Sakrament des Altars. որ է՝ խորհուրդ սուրբ մկրտութեան եւ խորհուրդ սեղանոյ (այսինքն՝ հաղորդութիւն): Ինչ առաւել հաստատութիւն է հարկաւոր քո լուստերաւորութեանը. լուստերական լինելու համար մարդս պէտք է՛ր ունենար գլխու վերայ եղջիրներ, որ դու կարողանայիր ասել, թէ դու լուստերական չես, որովհետեւ չունես եղջիրներ: Այո, գրում ես յետոյ, շատ տողերից յետ, Բուսերէն ասած առածի նման, Поистъ убогаго сораца «Հայոց եկեղեցին ընդունումէ եւս քահանայութիւն, պսակ, եւ վերջին օծումն». բայց այս տեղ քանի մոտածութիւններ են ծագում ընթերցողի մտքում: Նախ՝ այդ երկրորդ անգամը եւս չես յիշում ամենեւին մնացեալ երկու խորհուրդը՝ դրոշմ եւ ապաշխարութիւն. ո՞ր են նոքա, միմէ խորհուրդ չեն. միմէ մեր եկեղեցին չէ՝ ընդունում եւս դրոշմ եւ ապաշխարութիւն: Երկրորդ՝ քահանայութիւնը, պսակն ու վերջին օծումը չես կոչում խորհուրդ, որպէս կոչեցիր վերեւումը մկրտութիւնը եւ հաղորդութիւնը, արդեօք նոքա ծէսն են, թէ կամաւոր արարողութիւնները, թէ եկամուտ եւ անելորդ սովորութիւններ: Երրորդ՝ օտարազգի մարդու նման, երրորդ դիմաւ ասել, թէ Հայոց եկեղեցին ընդունումէ այս ինչ կամ այն ինչ, կրկին հաստատումէ յայտնապէս, թէ գրողը մասնակից չէ այն դատանութեանը, որ պատմաբանօրէն վերածումէ նա Հայոց եկեղեցուն: Չորրորդ՝ մկրտութիւնն ու հաղորդութիւնը կոչեցիր քրիստոսադիր, (որովհետեւ ասում ես, թէ նոցա կարգել է քրիստոնէութեան հիմնադիրը). այս տեղ ասում ես, թէ Հայոց եկեղեցին ընդունումէ եւս քահանայութիւն, պսակ եւ վերջին օծումն, որը որ չես կոչում ոչ խորհուրդ եւ ոչ քրիստոսադիր: Այդ բառական չէ՞, Պ. Նազարեանց, որ ամենայն ընթերցող կարողանայ առանց դժուարութեան հասկանալ, թէ դու Լուստերի վարդապետութեանը համաձայն դատարանում միայն երկու եկեղեցական խորհուրդ՝ մկրտութիւն եւ հաղորդութիւն, իբրեւ միայն քրիստոսադիր, որ ինչպէս ասում ես այլ տեղ՝ ունեցած են միշտ յարգ եւ կշիռ եւ էին այն երկու խորհուրդքը, որանցով պանդանուում է եկեղեցին: (1) Համարձակ եւ բացառապէս խօսում ես ընդդէմ մեր եկեղեցու դատարանութեանը ու դուռեւս ասում ես, թէ քո գրումները հակառակ չեն նորա ուսմանը: Պսակի համար գրում ես, թէ պիտոյ է խել նորան, եթէ նորա շարունակութիւնը այլ եւս կարելի չլինի ամուսնոց համար. (2) գուցէ մոռացել ես, թէ Հայոց եկեղեցին, Աւետարանի հիման վերայ, քարոզում է պսակը անխելի:

(1) Հանդէս նոր հայախօս. եր. 234, տող. 20—21.

(2) Վարդապետար. կրօնի. եր. 102:

(Նարայարութիւնն յատայիկայս.)

ՓԷԲԻՆԻ ՄԵՐ ԿԱՄՈՒՐԶԸ.

Անցեալ ամսոյ քաղաքական տեսութեան մէջ յիշեցինք Չինաց պատերազմին փառք աւարտումը. Դաղդիացիք ու Անգղիացիք մեծ յաղթութեամբ ստիպեցին Չինաց կայսրը ոչ միայն պատերազմին ծախքը լիովին վճարելու, հանդերձ ամենայն վնասուք անձին իւրաքանչիւր զինուորի, հապա նստել շահաւոր պայմաններ դրին եւրոպական վաճառականութեան, եւ ազատութեան քրիստոսական կրօնից, ինչպէս որ ընթերցողը թէ՛ ազգային եւ թէ՛ օտար լրագիրներէն տեղեկացած կլինին: Մեր հոս գնեմք Չինաց Փէբին մայրաքաղաքին մեծ կամուրջին տեսքը:

Փղիկեր մեծ կամուրջը :

